ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ “ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ” ՍՊԸ Միակ հիմնադրի “ՋԻ ԷՄ ՀՈԼԴԻՆԳ” ՍՊԸ 14.05.2020թ. թիվ 01/02/20 որոշմամբ ՓՈՓՈԽՎԱԾ Է՝ “ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ” ՍՊԸ Միակ հիմնադրի 18.01.2021թ. թիվ 01/01/21 որոշմամբ ՓՈՓՈԽՎԱԾ Է՝ “ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ” ՍՊԸ Միակ հիմնադրի 28.06.2021թ. թիվ 02/01/21 որոշմամբ ՓՈՓՈԽՎԱԾ Է՝ “ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ” ՍՊԸ Միակ հիմնադրի 01.09.2021թ. թիվ 01/09/21 որոշմամբ ՓՈՓՈԽՎԱԾ Է՝ “ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ” ՍՊԸ Միակ հիմնադրի 26.01.2023թ. թիվ 26/01/23 որոշմամբ Միակ հիմնադիր՝ “ՋԻ ԷՄ ՀՈԼԴԻՆԳ” ՍՊԸ տնօրեն՝ Ա. Միքայելյան _____	ԳՐԱՆՑՎԱԾ Է՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ Մ. Գալստյան _____ Vardan Stepanyan Digitally signed by Vardan Stepanyan Date: 2023.01.27 16:51:46 +04'00'

“ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ” ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) ստեղծվել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: Ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված բաժնեմասերի: Ընկերության մասնակիցները պատասխանատուն չեն Ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.2 Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրանցման) պահից:

1.3 Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (հետագայում՝ Օրենք կամ օրենսդրություն) և սույն կանոնադրությամբ:

1.4 Ընկերության մասնակիցների և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորում են օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.5 Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար:

1.6 Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.7 Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

կրճատ՝ «ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ

ռուսերեն լրիվ՝ "ДЖИ ЭМ ИНВЕСТ" общество с огрниченной ответственностью,

կրճատ՝ "ДЖИ ЭМ ИНВЕСТ" ООО,

անգլերեն լրիվ՝ "GM INVEST" LIMITED LIBILITY COMPANY,

կրճատ՝ "GM INVEST" LLC:

1.8 Ընկերության փոստային հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0010: Ընկերության գտնվելու վայրը և գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փողոց փակուղի, թիվ 8 շենք, թիվ 3/2 տարածքը:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Ընկերության գործունեության նպատակը տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է:

2.2 Ընկերության գործունեությունը ներդրումային ծառայությունների մատուցումն է:

2.3 Ընկերությունը կարող է իրականացնել «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված ցանկացած գործունեություն:

2.4 Ընկերությունը իր գործունեությունը իրականացնում է ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի հիման վրա: Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան ամբողջությամբ ուժը կորցրած ճանաչելվու դեպքում Ընկերությունը ենթակա է լուծարման՝ օրենքով սահմանված կարգով:

2.5 Ընկերությունը իր գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ եղանակով:

2.6 Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի թույլտվությամբ Ընկերությունը կարող է իրականացնել ներդրումային ընկերություններին բնորոշ այլ գործառնություններ:

2.7 Ընկերությունը չի կարող իրականացնել առևտրային, արտադրական և այլ տիպի գործունեություն, բացառությամբ "Արժեթղթերի շուկայի մասին" ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի:

2.8 Ընկերությունը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իր գործունեությունն իրականացնելու համար:

2.9 Ընկերությունը ինքն է որոշում իր կողմից տրամադրվող ծառայությունների սակագները:

2.10 Ընկերության և հաճախորդի միջև հարաբերությունները կարգավորվում են Օրենքով և կողմերի միջև կնքված պայմանագրով, այդ թվում՝ հրապարակային պայմանագրերով:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պետական գրանցման պահից Ընկերությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

Ընկերությունը, որպես սեփականություն ունի առանձնացվ՛ած գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա բանկային հիմնարկություններում՝ բանկային հաշիվներ (դրամով, տարադրամով):

3.2 Ընկերությունն իրավունք ունի ստեղծել մասնաճյուղեր՝ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

3.3 Ընկերությունն իրավունք ունի.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր և փոխառություններ, այդ թվում՝ արտարժույթով,
- օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,

3.4 Ընկերությունը պարտավոր է.

- ՀՀ օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ,
- պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցված վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկություններ հրապարակել իր գործունեության վերաբերյալ,
- ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,
- կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Ընկերության յուրաքանչյուր բաժնեմաս (փայ) տալիս է իր սեփականատեր հանդիսացող մասնակցին միևնույն իրավունքները: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի.

- Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում (այսուհետ՝ Ընդհանուր ժողով) քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված փայերի ձայների չափով,
- մասնակցել Ընկերության կառավարմանը, ստանալ շահութաբաժին Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- օգտվել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնեմասերի ձեռքբերման իրենց նախապատվության իրավունքից,
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, բացի գաղտնի փաստաթղթերից, այդ թվում ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին,
- Ընդհանուր Ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- Ընդհանուր Ժողովում հանդես գալ առաջարկություններով,
- հայցով դիմել դատարան Ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքների ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ գույքի իր հասանելիք մասը,
- ունենալ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

4.2 Ընկերության մասնակիցները պարտավոր են.

- սույն կանոնադրությամբ կամ Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված կարգի համաձայն կատարել ներդրումներ,
- չհրապարակել գաղտնի տեղեկություններ Ընկերության գործունեության վերաբերյալ,
- կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,

- պահպանել սույն կանոնադրության դրույթները:

4.3 Ընկերության մասնակիցները ունեն իրենց սեփականությունը հանդիսացող բաժնեմասերը (դրանց մասը) օտարելու կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով, այլ անձանց փոխանցելու իրավունք: Ընդ որում, մյուս մասնակիցներն ունեն այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք: Մասնակիցների կողմից իրենց վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում բաժնեմասերը կարող են օտարվել երրորդ անձանց: Բաժնեմասերի օտարման և ձեռքբերման նախապատվության իրավունքի իրացման գործընթացը իրականացվում է ՀՀ օրենսդրության համապատասխան:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

5.1 Ընկերությունը հանդիսանում է սեփականատեր՝
- այն գույքի, որը մասնակիցները ներդրել են որպես ավանդ կամ այլ պայմանավորվածությամբ նրան են հանձնել,
- տնտեսական գործունեության հետևանքով ձեռք բերած գույքի,
- ստացված եկամուտների,
- գործող օրենսդրությամբ չարգելված հիմունքներով ձեռք բերված գույքի:

5.2 Ընկերության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:

5.3 Ընկերության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը՝ տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են օրենսդրությամբ:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԴՐԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

6.1 Ընկերության կանոնադրական կապիտալը ձևավորվում է մասնակիցների կողմից բաժնեմասերի դիմաց կատարած վճարումների հաշվին:

6.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 595.000.000 (հինգ հարյուր իննսունհինգ միլիոն) ՀՀ դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է 11.900 (Տասնմեկ հազար ինը հարյուր) բաժնեմասերի (փայերի)՝ յուրաքանչյուրը 50.000 (Հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

6.3 Պետական գրանցման պահին Ընկերության բաժնեմասերը ամբողջությամբ բաշխված են:

6.4 Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանում է Ընկերության պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը:

6.5 Ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չի կարող պակաս լինել ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով սահմանված չափից:

6.6 Ընկերության կանոնադրական կապիտալում Ընկերության մասնակցի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելը կամ բռնագրավումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

6.7 Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն նրա՝ ամբողջությամբ վճարումից հետո:

6.8 Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը կարող է իրականացվել մասնակիցների լրացուցիչ ավանդների հաշվին, կամ երրորդ անձանց ավանդների հաշվին:

6.9 Ընկերության մասնակիցների կամ երրորդ անձանց բաժնեմասերի բաժանորդագրության հաշվին կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումը ընդունվում է Ընդհանուր Ժողովի կողմից՝ Ընկերության մասնակիցների ձայների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով, որով սահմանվում է լրացուցիչ ներդրումների գումարային արժեքը և ներդրումների կատարման կարգն ու ժամկետները:

6.10 Ընկերության փաստացի համալրված կանոնադրական կապիտալի նվազեցումը, ինչպես նաև գործունեության ընթացքում վճարված կանոնադրական կապիտալից շահութաբաժիններ բաշխելը արգելվում է բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Այն կարող է իրականացվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

7.1 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկերը և պարտադիր այլ վճարումները կատարելուց հետո ձևավորվում է Ընկերության տրամադրության տակ մնացած շահույթը: Շահույթի բաշխումն իրականացվում է կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորված պահուստների ու հիմնադրամների համալրման և շահութաբաժինների վճարման նպատակով:

7.2 Ընկերությունը կարող է շահութաբաժիններ վճարել բացառապես տարեկան արդյունքներով:

7.3 Ընկերության տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումն ընդունում է Ընդհանուր ժողովը, որը սահմանում է վճարման կարգն ու պայմանները:

7.4 Ընկերության մասնակիցներին շահութաբաժիններ վճարելն արգելվում է, եթե դրանց վճարման պահին Ընկերության կրած կորուստները (վնասները) հավասար են այդ պահին Ընկերության առկա չբաշխված զուտ շահույթի գումարին կամ գերազանցում են այն:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

8.1 Ընկերության կառավարման մարմիններն են.

- Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը (Ընդհանուր ժողով),
- Ընկերության տնօրենը

8.2 Ընդհանուր ժողովը

8.2.1 Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը մասնակիցների ընդհանուր ժողովն է: Ընկերության բոլոր մասնակիցներն իրավունք ունեն մասնակցել Ընդհանուր ժողովին, մասնակցել օրակարգի քննարկմանը և քվեարկել որոշումներ ընդունելիս: Ընկերության մասնակիցները իրավասու են մասնակցել Ընդհանուր ժողովին անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով: Ընկերության մասնակիցների ներկայացուցիչները պետք է ներկայացնեն իրենց լիազորությունները հաստատող փաստաթղթեր:

8.2.2 Ընկերության յուրաքանչյուր մասնակից Ընդհանուր ժողովում ունի Ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասերին համապատասխան ձայների քանակ:

8.2.3 Խորհրդակցական ձայնի իրավունքով Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունի Ընկերության տնօրենը, ինչպես նաև արտաքին աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի օրակարգում):

8.2.4 Ընդհանուր ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ: Հերթական Ընդհանուր ժողովները գումարվում են տարին մեկ անգամ: Հերթական Ընդհանուր ժողովները գումարվում են հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո՝ 6 ամսվա ընթացքում: Արտահերթ Ընդհանուր ժողովները գումարվում են Ընկերության տնօրենի կողմից՝ սույն կանոնադրությունում նշված հանգամանքների առկայության դեպքում, ինչպես նաև այն բոլոր դեպքերում, եթե դա են պահանջում Ընկերության և նրա մասնակիցների շահերը: Ընդհանուր ժողովները հրավիրում և անց են կացվում Օրենքով սահմանված կարգով:

8.2.5 Ընկերության տնօրենը կազմակերպում է արձանագրության վարումը: Արձանագրությունների գիրքը ցանկացած ժամանակ պետք է ներկայացվի մասնակիցներին: Նրանց պահանջով արձանագրությունների գրքից տրվում են Ընկերության տնօրենի կողմից հաստատված քաղվածքներ:

8.2.6 Ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Ընկերության մասնակիցների ձայների կեսից ավելին: Սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում (երբ քննարկվող հարցը պահանջում է բոլոր մասնակիցների միաձայնությունը) Ընդհանուր ժողովը իրավասու է բոլոր մասնակիցների (նրանց ներկայացուցիչների) ներկայության դեպքում:

8.2.7 Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններն են՝

1) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը.
2) Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխումը.
3) Ընկերության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.
4) Ընկերության լուծարման մասին որոշման ընդունումը.
5) Ամփոփ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.
6) Ընկերության աուդիտն իրականացնող անձի և նրա վարձատրության չափի հաստատումը
7) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթի բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը

տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի.

8) Ընկերության գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի հաստատումը և դրանցում փոփոխությունների կատարում:
9) Ընկերության տնօրենի, տնօրենի տեղակալների և գլխավոր հաշվապահի նշանակումը,
10) Ընկերության ներքին աուդիտի ղեկավարի և անդամներ նշանակումը,
11) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը,
12) Ընդհանուր ժողովի վարման կարգի և հաշվիչ հանձնաժողովի ձևավորման մասին որոշման ընդունումը.
13) 'Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին' ՀՀ օրենքով սահմանված դեպքերում Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը,
14) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.
15) Կախյալ և դուստր ընկերությունների ստեղծումը կամ մասնակցությունը.
16) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
17) 'Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին' ՀՀ օրենքով սահմանված և Ընկերության տնօրենի իրավասությունը չհանդիսացող այլ իրավասություններ:

8.2.8 Ընդհանուր ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք 'Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին' ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանվել են որպես Ընկերության տնօրենի իրավասություն:

8.2.9 Որոշումներն ընդունվում են Ընդհանուր ժողովին մասնակցող մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, ընդ որում 8.2.7 կետի 1), 2), 3) և 4), ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են Ընդհանուր ժողովի կողմից Ժողովին մասնակցող Ընկերության քվեարկող բաժնեմասերի սեփականատերի ձայների 2/3-ով:

8.2.10 Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել Ընկերության տնօրենի որոշմանը, բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի:

8.2.11 Մեկ մասնակից ունենալու դեպքում Ընկերության միասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերի կապակցությամբ որոշումները ընդունվում են Ընկերության միակ մասնակցի գրավոր որոշմամբ:

8.3 Ընկերության տնօրենը

8.3.1 Ընկերության միանձնյա գործադիր մարմինը Ընկերության տնօրենն է: Նա իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Ընկերության տնօրենը նշանակվում է և նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Ընդհանուր ժողովի որոշմամբ:

8.3.2 Ընկերության տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությունը հանդիսացող հարցերից:

8.3.3 Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենսդրությամբ և Ընկերության ու նրա միջև կնքված աշխատանքային պայմանագրով: Ընկերության անունից պայմանագիրը ստորագրում է Ընդհանուր ժողովի կողմից լիազորված մասնակիցը:

8.3.4 Տնօրենը կազմակերպում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշումների կատարումը:

Ընկերության տնօրենը՝

1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից.
2) կնքում է Ընկերության գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված գործարքներ Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի մինչև 25 %-ի չափով,
3) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
4) առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից,
5) տալիս է լիազորագրեր.
6) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
7) բանկերում բացում է Ընկերության բանկային և այլ հաշիվներ.
8) իրականացնում է Օրենքով սահմանված կարգով Ընկերության մասնակիցների տարեկան և արտահերթ Ընդհանուր Ժողովների հրավիրումը, Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու, ամսաթիվը հաստատելու, ինչպես նաև այն բոլոր հարցերը լուծելու, որոնք կապված են Ընդհանուր ժողովի նախապատրաստման և գումարման հետ և վերապահված են Ընկերության տնօրենի իրավասությանը,
9) Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում դրա իրավասության շրջանակներում գտնվող հարցերին վերաբերող առաջարկություններ.
10) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
11) օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Ընկերության աշխատողներին.
12) Ընկերության աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
13) լուծում է ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ հարցեր, իր իրավասության շրջանակներում իրականացնում է այլ գործառույթներ:

8.3.5 Ընկերության տնօրենն իր պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործի ելնելով Ընկերության շահերից, իրացնի իր իրավունքները և Ընկերության նկատմամբ իր պարտականությունները կատարի բարեխիղճ ու ողջամիտ կերպով:

8.3.6 Ընկերության տնօրենն Ընկերության առջև պատասխանատվություն է կրում իր գործողությունների (անգործության) հետեւանքով Ընկերությանը պատճառած վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Տնօրենի հրաժարականը, պաշտոնից հետ կանչելը կամ ազատելը չի ազատում նրան Ընկերությանը պատճառած վնասի համար պատասխանատվությունից: Տնօրենի պատասխանատվության հիմքերի և չափի որոշման ժամանակ պետք է հաշվի առնվեն գործարար շրջանակների սովորույթները և գործի համար կարևոր նշանակություն ունեցող մյուս հանգամանքները: Տնօրենը ազատվում է Ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությունը կկրի վնասներ:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ

9.1 Ընկերության գործունեության արդյունքներն արտացոլվում են Ընկերության ֆինանսական, վիճակագրական, հարկային հաշվետվություններում, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում, ինչպես նաև Ընդհանուր ժողովի կողմից սահմանված հաշվետվություններում:

9.2 Ընկերությունը հաշվապահական հաշվառումը վարում է ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ կառավարության լիազորված մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համապատասխան:

9.3 Ընկերությունը կազմում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում մամուլում հրապարակում է տարեկան և եռամսյակային ֆինանսական, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ հաշվետվություններ՝ օրենսդրությամբ և ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ձևերով և կարգով:

9.4 Ընկերության ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

9.5 Ընկերության հաշվառման և հաշվետվական համակարգը վարում է Ընկերության գլխավոր հաշվապահը: Գլխավոր հաշվապահի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են "Հաշվապահական հաշվառման մասին" ՀՀ օրենքով սույն կանոնադրությամբ և Ընկերության հետ կնքված աշխատանքային պայմանագրով: Գլխավոր հաշվապահը նշանակվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Տնօրենի ներկայացմամբ: Նա ենթակա է անմիջականորեն Տնօրենին և հաշվետու է նրան ու Ընդհանուր ժողովին:

9.6 Գլխավոր հաշվապահը կազմակերպում և սպասարկում է Ընկերության ընթացիկ գործունեության հաշվապահական և հաշվետվական համակարգերը, ձևավորում է ղեկավարությանը և երրորդ անձանց ներկայացվող ֆինանսական, վիճակագրական և հարկային հաշվետվությունները և պատասխանատու է դրանց համար:

9.7 Ընկերության գլխավոր հաշվապահը՝

- վարում է Ընկերության հաշվապահական հաշվառումը,
- կազմում և ներկայացնում է ՀՀ կենտրոնական բանկին, հարկային և սոցիալական ապահովագրության մարմիններին ներկայացվող հաշվետվությունները,
- կազմում է Ընկերության կառավարման մարմիններին ներկայացվող բոլոր ֆինանսական հաշվետվությունները,
- իրականացնում է Ընկերության գործունեության հաշվապահական վերահսկողությունը,
- իրականացնում է բյուջեի կատարման վերահսկողությունը և հաշվետվություններ է ներկայացնում Տնօրենին և Ընդհանուր ժողովին,
- իրականացնում է Ընկերության կանոնադրությամբ և ներքին կանոնակարգերով սահմանված այլ գործողություններ:

9.8 Գլխավոր հաշվապահը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասների համար:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

10.1 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ընկերության ներքին աուդիտը:

10.2 Ընկերության ներքին աուդիտը կազմված է առնվազն մեկ անձից՝ ներքին աուդիտորից, որին ընտրում է Ընդհանուր ժողովը:

10.3 Ներքին աուդիտորը պետք է բավարարի օրենդրությամբ ներդրումային ընկերության ներքին աուդիտորին ներկայացվող պահանջներին և ունենա համապատասխան որակավորում:

10.4 Ներքին աուդիտոր չի կարող լինել Ընկերության կառավարման մարմնի անդամը, այլ իրավասություններով օժտված ղեկավարը և աշխատակիցը, ինչպես նաև Ընկերության, դրա ղեկավարների կամ այլ աշխատողների հետ փոխկապակցված անձը:

10.5 Ներքին աուդիտորն անկախ է իր իրավասություններն իրացնելիս և հաշվետու է Ընդհանուր ժողովին:

10.6 Ներքին աուդիտորն Ընկերության կողմից հաստատված կանոնակարգի համաձայն՝

- հսկողություն է իրականացնում Ընկերության ընթացիկ գործունեության և ռիսկերի նկատմամբ.
- ստուգում է Ընկերության գործունեության համապատասխանությունն օրենսդրությամբ, կարգավորվող շուկայի կանոններով, Ընկերության գործունեության կանոններով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին.
- տալիս է եզրակացություններ և ներկայացնում է առաջարկություններ իրավասու կառավարման մարմնի ներկայացրած և այլ հարցերի վերաբերյալ:

10.7 Ընկերության տարեկան հաշվեկշռի, ներառյալ եկամտի/ծախսերի, հաշվապահական հաշվեկշռի և դրամական հոսքի վերաբերյալ հաշվետվության հաստատման ժամանակ ներքին աուդիտորի եզրակացությունը պարտադիր է:

10.8 Ընկերության տնօրենը պարտավոր է ապահովել բավարար պայմաններ ներքին աուդիտորի իրավասությունների արդյունավետ իրացման համար:

10.9 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը յուրաքանչյուր տարի պետք է ենթարկվի աուդիտորական ստուգման՝ արտաքին աուդիտորի կողմից:

10.10 Աուդիտն իրականացնող անձը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրությամբ ներդրումային ընկերության աուդիտն իրականացնող անձի նկատմամբ սահմանված չափանիշներին:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

11.1 Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը իրականացվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է մասնակիցների ընդհանուր թվի ձայների 2/3-ով:

11.2 Ընկերության կանոնադրությունում կատարված փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը իրավաբանական ուժ են ձեռք բերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցվելուց հետո:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ

12.1 Ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս կարող է ունենալ մասնաճյուղեր: Մասնաճյուղերը հիմնադրվում են սույն կանոնադրությամբ սահմանված իրավասու մարմնի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

13.1 Ընկերությունը կարող է վերակազմակերպվել Ընդհանուր ժողովի որոշմամբ: Ընկերության վերակազմակերպումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

13.2 Ընկերության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու: Ընկերության լուծարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

«ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ
կանոնադրության հավելված

«ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Մասնակցի անվանումը և գրանցման տվյալները	**Բաժնեմասերի քանակ**	**Բաժնեմասերի չափը** %	**Ստորագրություն**
< ՋԻ ԷՄ ՀՈԼԴԻՆԳ > ՍՊԸ, գրանցման համար 443.110.937206, գրանցման ամսաթիվ 02.12.2016թ. , ՀՎՀՀ 90039266, գտնվելու վայրը՝ Ստեփանակերտ, Վազգեն Սարգսյան 25/4 Տնօրեն Արսեն Միքայելյան	11.900	100	